

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-2

ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ

ԿԹ. ՏԱՐԻ 1955

Կ Յ Ո Ւ Ր Գ Ք

Ս. ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

Կ Յ Ո Ւ Ր Գ Ժ Է.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ Ի ՀԻՆԳ ՆԿԱՆԱԿԷՆ ՅԱԳԵՑՈՅՑ ՀԱԶԱՐՍ ԲԱԶՈՒՄՍ

Որ քննես զճնունդ Որդւոյ, պատմեա զպարգեւէ նորա.

Թէ զիա՞րդ ի հինգ նկանակէ յազեցան հազարք բազումք:

Աւրհնեալ որ ի հինգ նկանակէ յազեցոյց հազարս բազումս.

Ի հինգ նկանակէն յազեցան: Եթէ նկանակքն նկանա՞կս ծնան:

5 *Եւ զիա՞րդ ծնան նկանակքն այն առանց յղութեան*

եւ ամուսնութեան:

Աւրհնութիւն ձեռացն, որ ի նոսա յղացան նկանակքն զմիմեանս.

Հինգ նկանակքն այն ծնան բիւրս եւ հազարս նկանակաց.

Զորս մանուկն բարձեալ ունէր՝ լցաւ ի նմանէ բնաւ անապատն.

10 *Եւ որք ի զաստառակի ծրարեալ էին՝*

երկոտասան սակառի նշխարեցին:

Ասացէ քննողն. Զիա՞րդ ծնան նկանակքն զմիմեանս,

Ո՞ ետ աճումն նկանակացն, որ ամուլ էին բնութեամբ իւրեանց:

Եւ զի նկանակքն զմիմեանս ծնան առանց

15 *ամուսնանալոյ եւ սրբապէս,*

Ո՞ բաժանեսցի ի ծնողենէ սուրբ անդրանկանն Մարիամու:

Ա՛ռ տէրն մեր զհինգ նկանակն եւ անդրէն իրբեւ հայեցաւ յերկինս,

եռացին նկանակքն ի ձեռս նորա.

եւ զարմանք կալան զաշակերտսն նորա.

20 *Զի հինգ էին, ամենայն ոք զիտէր,*

եւ եթէ զիա՞րդ բազմացան, զայն ոչ ոք զիտէր:

Առաքեալքն կրէին ի ձեռաց նորա.

Ոչ եթէ երկոտասանքն միայն կրէին զհացն ի ձեռաց նորա,

այլ եւ եւթանասուն եւ երկուքն կրէին հաց հազարաց մարդկան:

25 *Զի եթէ եւ ամենայն ժողովրդեանն կրեալ էր հաց ի ձեռաց նորա,*

պարտէին ի բազմութենէն, զոր կոտորէր արարչութիւնն նորա:

D = Տպագիր Վենետիկի (1934):

E = Ձեռագիր Թ. 257, Վիեննայի:

Խորագիր՝ D օ. է:

11 E երկոտասան: — 12 E քննողն: — 23 E երկոտասանքն:


Եւ իբրեւ մատեաւ Շմաւոն, կարծեաց
 Թէ իւր եւեթ բաւական գուցէ.
 անդք լի բազկովք իւրովք առնոյր եւ ի ձեռաց նորա ոչ պակասէր.
 30 Առաջի բազմականացն բազմանայր եւ ի վերայ ձեռաց նորա աճէին:
 եւ ի բազկէ Որդւոյ աւծելոյ ո՞ է որ ասացէ թէ քանի՞ աճէր:
 Հազարք հիւանդաց եւ ախտաժէտք էին յամենայն կողմանց.
 յետ բժշկելոյ զախտս նոցա յազեցոյց զքաղցութիւնս նոցա:
 Առաքինութիւն առանց թուոյ, ի հիւանդս առանց համարոյ
 35 արար նա ի ժողովուրդն յայն.
 Յետ քննելոյ աւուրս երիս՝ ապա արար սքանչելիս,
 որում վկայեաց ժողովուրդն ամենայն:
 Յամենայն ումեքէ փառաւորեցաւ,
 զի ամենայն ոք լցեալ յազեցաւ.
 40 Անոյշ էր հաց անապատին, իբրեւ զմանանայն յանապատին.
 Մանանայն այգուց ապականէր,
 եւ նա որչափ ընդերկարէր, անուշանայր.
 Սակաւ էր հացն որ նշխարեցին,
 զի երկոտասան սակառի նշխարեցին.
 45 Յոյժ էր հացն զոր կերան,
 եւ առաւել եւս զոր նպարակն բարձին.
 Ոչ ունէին որովայնք նոցա, որչափ ունէին շալակք նոցա.
 Յորովայնսն չափով բարձին, եւ առանց չափոյ ի շալակս իւրեանց:
 Յազեցան, նպարակեցին եւ նշխարեցին.
 50 Եւ զի ոչ ոք էր որ առնոյր՝ ժողովեաց յանապատին,
 զի մի կորիցէ նշխար աւրհնեալ հացին:
 Աւրհնեացէ Տէր զյարկս ձեր յաղաւթից երկրպագուաց իւրոց.
 զի զսուրբան ուրախ արարէք, ուրախ լիջիք ընդ հրեշտակս նորա:

Կ Յ Ո Ւ Ր Գ Ժ Ը.

ԱՒՐՀՆԵԱԼ ՏԵՐ ԵՒ ԱՆԳՐԱՆԻԿՆ, ՈՐ ԿԵՐԱԿՐԻ ԶԱՄԵՆԱՅՆ ԱԿՆԱՐԿԵԼՈՎ, ԿԱՄԱՑ ԻՐՈՑ

Աւրհնեալ Տէր հոգաբարձու քաղցելոց որ ընդ չորս կողմանս.
 զի ուստի ոչ ակն ունի, անտի պատրաստի նմա կերակուր:
 Ո՞յր միտք կարծեցին երբեք, եթէ ազուաւք կերակրեն զմարդ.
 եւ այս որ ամենայնի զժուարին է, գիւրաւ զործեաց առ Եղիա:
 5 Իբրեւ ասաց ցնա Տէր իւր, եթէ Թաղիր ի ձորն Քորիաթու,
 Խորհեցա՞ւ արդեւք, թէ՞ ո՞ր բերիցէ կերակուր յանապատն ահագին:
 Թեբեւս կարծէր եթէ մանանայ բերիցէ նմա իբրեւ ժողովրդեանն.

29 D անդ. E անդք. Յովհ. Երզնկ.՝ անթքն. — 36 D եւ յետ: — 42 DE անոյշանայր:
 — 44 E երկոյտասան:
 ԺԸ. 3 E Կրեէք: — 4 D այսր որ: E Կղիայ: — 5 D Թէ DE քերիաթու: — 6 E ար-



Կամ իբրեւ զՄովսէս մնայ նա առանց կերակրոյ ի գլուխ լերինն:
 Մինչդեռ խորհէր վասն այսորիկ, կամ մինչչեւ խորհեալ էր,
 10 ասէր ցնա, թէ Ազուաւուց հրամայեցի կերակրել զքեզ:
 Իբրեւ ասացաւ այս Եղիայի, լուան ազուաւք զպատգամս նորա.
 ի ծննդենէ եւ ի սիրելոյ աւտարացան,
 զի կերակրեսցեն զմարգարէն.
 Ազուաւք փախչողք ի մարդկանէ, համբուրեցան ընդ Եղիայի.
 15 զի ոչ միայն հաց բերցեն նմա, այլ զի լիցին նմա բանիցընկեր:
 Եւ զի անարգեաց զչէն մարգարէն եւ ել նա ի ձորն ահագին,
 ազուաւք աւտարացան յանապատն,
 զի ցանկացան շինութեան մարգարէին:
 Անդ արարին բնակութիւն եւ արաւտս.
 20 անդէն տածէին եւ ոչ փախչէին յերեսաց նորա,
 զի եղիցին նմա ի զբաւսանս.
 ի ժամու ճաշոյ ուտելոյ երթային նոքա ստիպաւ.
 զի մին բերիցէ հաց ի բերան, եւ միւսն միս ի շրթունս իւր:
 Ի հասարակ աւուր, առ երեկոյի,
 25 զի հանգչի ամենայն թեւ ի վաստակոյ,
 նոքա աշխատէին հանդերձել ճաշ եւ ընթրիս մարգարէին:
 Եթէ վաստակէին եւ եթէ ոչ, ի ժամու զի ժողովի թեւ
 ի հասարակ աւուր բերէին ճաշ
 եւ երեկոյի զընթրիս նորա:
 30 Թեբեւս ոչինչ ճաշակէին, զի ուսան պահս նորոգապէս.
 զի ի կերակրոյ նորա կարճեալ էին,
 յամենայն կերակրոց գտան աւտարացեալ:
 Մին ունէր հաց ի բերան, եւ միւսն միս յատամունս իւր,
 եւ ոչ զինչ համ էր նոցին գիտէին:
 35 Իբրեւ զնէին առ սեղան նորա զհացն եւ զմիսն,
 կային առ նմա մինչեւ ուտէր նա,
 զի կերիցեն ի նշխարաց նորա.
 ի հացէ նորա ուտէին որչափ եղեւ ի ձորն Քորիաթու,
 եւ նա որ կերակրեաց ի Ծարթափ զայրին,
 եւ զագրաւսն ի ձորն Քորիաթու:
 40 Հոգաբարձուք մարգարէին կարաւտ էին մարգարէին.
 զի ի նորա պատճառս կերակրեցան:
 Քաղցեալքն այն կերակրեցին զնա.
 եւ քաղցեալն զարձաւ զքաղցեալսն կերակրեաց:
 45 Երկեաւ եւ փախեաւ ի մահուանէ, եւ կեցոյց զորդի այրւոյն:
 Աւրհնեալ Անդրանիկն, որ զթուշունսն ած զկնի կամաց իւրոց.
 զի կերակրեսցեն զԵղիա եւ կերակրեսցին ի նմանէ:

դեաւք: — 12 DE սիրելոյ: — 13 փախչողք: — 14 բանից ընկեր: — 27 E թիւ: — 34 D
 կամ (փոխ. համ): — 38 E քորիաթու: — 40 D հարթաք: D քորիաթու E քորիաթու: —
 47 E Կղիայ:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ժ Թ .

ԱՒՐՀՆԵԱԼ ՄԻԱԾԻՆՆ; ՈՐ Ի ՊԱՐԳԵԻԻ ՆՈՐԱ ԿԵՐԱԿՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԱՐԱԾՔ

Աստուած որ կերակրեաց զճառայս իւր ազուաւաւք,
 որ յափշտակեն զայլոց,
 աւրինակ ետ մեծատանց, զի նմանեսցին թռչնոյ.
 զի կեցին ի ձեռս Եղիայի ազուաւք, այն, որ կերակրեցին զնա.
 5 ի նոցայոցն տայր նոցա, զի կէին ի նշխարէ նորա,
 որք վաստակեցին, կերակրեցին զմարգարէն:
 Ոչ ստացաւ զհատուցումն նոցա.
 ի ձորն յոր հանգուցին զնա, յաճախեաց ի նմին զհանգիստ նոցա:
 Կեանք խոստացեալք եթէ գոյին թռչնոց, անդ հատուցանէր նոցա,
 10 արդ զի այս աշխարհ եւեթ է նոցա, յայտմ աշխարհի հատոյց նոցա:
 Եթէ ազուաւք, որ անվարձ էին, առին հատուցումն ի մարգարէն,
 զմարդիկ, որոց խոստացեալ է զհատուցումն,
 զիա՞րդ զրկիցէ բարերարն:
 Հաճեալ էր ընդ ձորն Եղիա, զի առանց հոգոց էր ի նմա,
 15 սակաւ էր տիւ աղաւթից նորա, եւ գիշերն ողջոյն խնդրուածոց.
 Աքայար ի նմանէ հեռի էր. եւ Յեզարել կին նորա ի բացեայ էր.
 ի հանգանակաց սուտ մարգարէիցն խնայեաց զնա անապատն,
 խաղ աղաւթքն էին նմա անդ եւ ազուաւքն ի զբաւսանս.
 Հանգիստ կատարեալ էր նմա. եւ զի մի աստանդեսցին միտք նորա,
 20 զագրաւսն ի զբաւսանս առաքեաց նմա.
 առնոյր ի բերանոց նոցա զհացն եւ զմիսն, զոր բերէին,
 եւ զնէր ընդ ատամամբք նոցա հաց եւ միս զոր նշխարէր:
 Որպէս համբուրեցան ընդ Ադամայ
 եւ ընդ Նոյի գազանք եւ թռչունք,
 25 համբուրեալ էին ընդ Եղիայի ազուաւքն պաշտաւնեայք նորա:
 Ել ազուաւ ի տապանէն եւ ոչ յաւել մտանել անդրէն,
 բայց սոքա հացիւ եւ մսով գային առ նա.
 զիտեմ զի եթող զնոյ՝ մինչ գազանք եւ թռչունք առ նմա էին.
 նոքա յարեցան առ մարգարէն իբրու միայնացաւն յամենայնէ:
 30 Նոյ, որ կերակրէրն զնոսա հանապազ, փախչել կամէին ի նմանէ,
 եւ զԵղիա նոքա կերակրէին եւ ոչ թողոյին եւ փախչէին ի նմանէ:
 Ատեցին զչէն, որ ի տապանին, եւ սիրեցին զաւեր ջրհեղեղին.
 եւ նոքա ատեցին զչէն եւ սիրեցին զաւեր
 ի բանրնկերութեան մարգարէին:

ԺԹ. 1 D ազուաւք: — 3 D էր... թռչնոց: — 5 D նոցայոցն: — 11 D զհատուցումն: — 14 E եղիայ: — 16 D աքայար: — 19 D միտքն: — 21 D բերանոց: — 31 E զեղեայ:

35 Ազուաւ, որ ոչ պահեաց զմիաբանութիւն
 ընդ ամուսնոյ իւրում ի տապանին,
 այլ եթող զնա ընդ վայր եւ մոռացաւ, եւ ոչ յաւել եմուտ առ նա,
 կայր մնայր առ մարգարէին հանդարտութեամբ
 եւ ոչ եւս մեկնէր ի նմանէ:
 40 Ազուաւ որկորեայ եւ անողորմ՝
 եղեւ կցորդ մարգարէին կերակրել եւ դարմանել զնա.
 Չորն Քորիաթու արամեցոյց զԵղիա ջուրքն որ ցամաքեցան.
 եւ զազուաւսն եւս տրամեցոյց,
 զի միայնացան ի բանրնկերութենէ նորա:
 45 Իբրու զնաց անախ Եղիա, ազուաւքն բարբառով խնդրէին զնա.
 հայցէին զկերակուր նորա եւ զընտելութիւն եւ զհամբոյր նորա,
 թերեւս չոգան ըստ սովորութեան
 հասարակ աւուր եւ երեկորեայ բերել.
 եւ զի ոչ գտին ըստ սովորութեան,
 50 զարձան անդրէն տրամութեամբ.
 կամ արդեւք եւ չոգան իսկ ոչ, զի անդրէն իբրեւ զնաց Եղիա՝
 աւտարացան ի հոգաբարձութենէն, յորում էին նոքա առ Եղիայի:
 Մերկացան զսէր մարգարէին, զի հոգասցին զանձանց իւրեանց,
 որք ընդ իւրեանց եւ ընդ նորա հոգային:
 55 Գիշերի զնաց ի ժողովրդենէն,
 զի գուցէ տեսանիցեն եւ սպանանիցեն.
 գիշերի զնաց ի Ծործորոյն,
 զի մի տեսցեն ազուաւքն եւ տրամեսցին.
 զի ատեցին զնա որդիք ազգի իւրոյ,
 ազուաւքն որկորեայք սիրեցին զնա.
 60 Եւ զի տրամեցոյց զնա ազատութիւն,
 զգուեցին զնա թռչունք:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ի .

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԵՏ ՄԵՁ ԿԵՐԱԿՈՒՐ Ի ԴԱՐՄԱՆ ԿԱՐԱԻՏՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ
 Ազուաւք, որ կերակրեցին զԵղիա, ի ձեռն Եղիայի կերակրեցան.
 զի ետ վարձս նոցա եւ կերակրեցան ի վաստակոց իւրեանց.
 Երբայեաց պակասեաց ջուր. եւ նոցա հաց նշխարեալ էր.
 մարգարէք հացի քաղցեալ էին. եւ ազուաւուց միս մթերէր:
 5 Եւ զի հալածեաց Յեզարել զմարգարէսն,
 եւ կերակրեաց զնոսա ի տանէ իւրմէ:

38 D մարգարէն: — 42 DE քարիաթու E եղիայ: — 45 E եղիայ: — 46 E նորայ: — 51 E արդեւք... եղիայ: D իբրու: Ի. հորագիր՝ DE ի գարմանի: 3 D երբայեաց. բերես՝ նուազեաց պ. ... նշխարեալ ետ: — 5 E կարել:

Ո՞վ ասասցէ թէ զմարգարէս կերակրէր Աքայար թագաւոր .
 թէպէտ եւ նոքա կերակրեցին . զի չէր գիտակ այնմ
 որ գործեաց Արդիու առ հարիւր մարգարէսն .
 10 զի նա կերակրեաց զմարգարէսն , ուստի ակն ոչ ունէին :
 Ո՞ կարէր իմանալ , եթէ ի տանէն Աքայարու կերակրին նոքա .
 սակայն կերակրեաց զնոսա , որ կերակրէ ի սկզբանէ
 մինչեւ ի կատարած
 զորդիս մարդկան եւ զանասունս եւ զսողունս
 15 եւ զթռչունս երկնից :
 Իբրեւ ետ Արդիու զոր ինչ ունէր՝ մարգարէիցն ,
 սկսաւ գողանալ ի տանէն Աքայարու ,
 զի արկցէ շունչ ի մարգարէսն .
 եւ որ գողանալով գողանայր ,
 20 պարտ էր զի համար տայցէ ամենայնի :
 Մինչ կամէր հատուցանել զփոխս՝
 վաղվաղեաց վարեաց զնա մահ .
 եկին ծառայք տանն Աքայարու պահանջել զպարտս Արդիու .
 եւ վասն զի ոչ մնացին նորա ժառանգութիւն ,
 25 զժառանգան ծառայս արարին :
 Մատուցեալ մայր նոցա առ Եղիշա
 եւ յիշեցոյց զգործս առն իւրոյ ,
 զի ոչ գորդիս իւր կեցոյց փոխովք ,
 այլ զմարգարէս կերակրեաց փոխովք .
 30 Այր իմ մեռաւ , ասէ , եւ դու գիտես , զի երկիւղած էր յԱստուծոյ .
 եւ տէր պարտուց եկեալ վարէ զերկուս որդիս իմ իբրեւ զծառայս .
 Չէ արժան թէ ծառայեսցէ զաւակ արդարոց՝ անաւրինաց .
 մի պատրանաւք կամ յերկիւղէ լծեսցին ի լուծն Բահաղու :
 Թէպէտ եւ փոխ առ Արդիու , այլ Աստուած եղեւ երաշխաւոր նմա .
 35 իբրեւ գտեսուչ Աստուծոյ հատոյց զպարտան Աստուծոյ .
 Ասէ ցնա . Ժողովեա ամանս զգրացեաց եւ զգեղջէից քոց ,
 եւ յորժամ լցցես զնոսա ջրով՝ աման մի լի հանցես առ իս :
 Ել նա ընդ մի կողմն եւ որդիք իւր ընդ միւս կողմն .
 ամենայն գեւղն զարմացեալ էին ընդ ունայն ամանոցն
 40 զորս ժողովեաց ,
 որ տեսինն զնա իբրեւ մերձեցաւն , չէին կարաւտ հարցանելոյ .
 եւ որ ոչ տեսինն , յայնմանէ զի ժողովէր զամանսն՝ գիտացին :
 Ի ծուփս էր ամենայն ոք , թէ ի՞նչ լնուցու զամանսն ,
 եւ ի՞նչ կարասցէ հատուցանել զբազում պարտան Արդիայ ,

8 D արար : — 11, 17 D արարու : — 20 D տայց : — 21 D արարու : — 24 վասն
 չուրի D : — 26 D եղիշայ : — 35 D գտեսուչ աստուած : — 39 D եաւղն :

45 փոխեաց նա զջուրն յեւղ եւ փակեաց զգրունսն ընդդէմ իւր .
 զի մի լիցի նա այսպանեալ ի մարգարէից
 եւ ի քրմացն Բահաղու ,
 որ ժողովէին ի տեսիլ նորա :
 Իբրեւ ելից զամանսն ջրով , եհան զմին որպէս ա՛ռ պատուէր .
 50 իբրեւ զմի ամանն արար եւղ ,
 յամենայն ամանսն արկանել յղեաց զնա :
 Արկ նա ի ջրոյն որ եղեւ եւղ , յառաջնոյն յայլսն ,
 եւ ոչ ջուրն գեւղն փոխեաց , այլ եւղն զջուրն այլագունեաց .
 զամանն զոր եհան առ մարգարէն նոյնժամայն յեւղ շրջեցաւ .
 55 եւ այն ամանքն յորս նայն արկ , ահա կային
 ի բնութեան իւրեանց :
 Իբրեւ արկ նա ի ջրով ամանսն եւ ասէ ցորդիս իւր .
 Մատուցէք եւս .
 եւ իբրեւ ասացին թէ սպառեցան ամանքն ,
 60 դարձան յեւղ ամենայն ամանքն :
 Եւ զի փակեաց զջուրն տան իւրոյ
 ընդ երեսաց ձաղանաց ի ընուլ զջուրն ,
 երաց նա իբրեւ ի փառս ի ժամու զի դարձան յեւղ .
 տեսին նշան եւ ետուն փառս Աստուծոյ ի վերայ երկոցունց .
 65 զի փոխեաց զջուրն ի ձէթ եւ հատոյց պարտս ընդ Արդիայ :
 Եհան եւ վաճառեաց այրին ե՛ւ մեծատանց ե՛ւ աղքատաց .
 եւ տունն Աքայարու առ գուրս նորա զային
 գնել եւղ ի նմանէ :
 Աւելի քան զոր ինդրեացն՝ ետ նմա Եղիշա .
 70 ինդրեաց զի հատուցէ զպարտս իւր .
 ետ նմա զի հատուցէ եւ կերակրեսցի .
 արար յանկարծակի մեծատունն ,
 զոր ստացաւ նախ քան զամենայն :
 Տեսէք որպէս հատուցանէ ստոյգն այնոցիկ
 որ առնեն զողորմութիւնս .
 75 զի ոչ միայն զոր ետուն՝ տայ նոցա ,
 այլ առաւել եւ աւելի տայ .
 զի զամենայն զոր աստ տայ մեզ , ոչ համարի ի հանդերձեալն ,
 զի այս ամենայն յաւելորդէ տուեալ լինի որպէս ասաց :

45—54 DE յեղ , եղ . ուղղած եմ եւղ : — 49 D զմինն : — 50 D արարեալ : — 62 D
 լնուլն : — 69 D ինդրեաց նա . D եղիշա . E եղիշայ : — 75 D զողորմութիւն : — 77 E տա :
 — 79 D աւելորդ է :

Կ Յ Ո Ւ Ր Գ Ի Ա .

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԱՃԵՑՈՅՑ ԶԾՈՅՍ ԱՄՈՒԼ Ի ՄԷՁ ՏԱՆ ԿՆՈՁՆ ԱՅՐԻՈՅ .
ԶԻ ՍՐՈՒԱԿԻ ԵՒ ՍԱՓՈՐԲ ԱՄՈՒԼԻ Բ ԾՆԱՆ ՅԱՆԿԱՐԾ ՅԱԿԱՆ ԹԱԻԹԱՓԵԼ

2 Ձի աղքատ էր կրնն, մեծացաւ . զի քաղցեալ էրն յազեցաւ .
 5 եւ զի մուրանայր յամենայնէ՝ ետ նա կերակուր ամենայն ումեք .
 եւ զի բախեաց զգուրս բազմաց, կացին բազումք առ դուրս նորա .
 Հատոյց փոխարէն սակաւուց, եւ արար շնորհս բազմաց .
 10 Ակն բարի ստացեալ ունէր, զի բղխումն ալեր բացեալ ունէր .
 դանձք արքունի ընդ նովաւ էին,
 զի բղխումնք վերնոց ընդ նովաւ էին .
 ետ նա հաց քաղցելոց, եւ եւղ այրի կանանց .
 եւ ի տանս եւ ի գլուխս ամսոց առնէր հանգիստ ամենայն ումեք :
 15 Ձի գիտաց զկարիս քաղցելոց, ոչ արգել զհաց ի քաղցելոց .
 եւ զի ողորմեցաւ նմա ճրի Աստուած,
 ոչ արգել զողորմութիւն յումեքէ .
 իբրեւ մեծացաւ եւ փարթամացաւ,
 եւ ա՛ռ երանութիւն յամենայն ումեքէ .
 20 Հարակնեաց ախտ զմիամաւր նորա, եւ եթող զնա շունչ իւր :
 Ելաց եւ ամբաստան եղեւ զԵղիշայէ առ Եղիշա .
 Եկիր, ասէ, յիշատակել զմեղս իմ եւ սպանանել զորդեակս իմ :
 Մոլիքն ասեն . Թէ արդար է, ընդէ՞ր ետ մանկանն մեռանել .
 հեթանոսք ասեն . Թէ մեղաւոր էր,
 25 զսափորն եւ զսրուակն ո՞ւ ամեցոյց :
 Ուրախութիւն կնոջն դարձաւ ի սուգ,
 զի անկաւ ի ձեռս քրմաց նոցա .
 Թէ նա է, ասէ, որ արգել զերկինս,
 դարձուցէ զշունչ որ միակին է .
 30 զի եթէ լուան նմա ամսք, փոխանակեսցէ մի շունչ ի ձայնս նորա .
 ի ձեռս հոգւոյ մանկանն որ դառնայ,
 հաւատարիմ լինի թէ արգել զանձրեւն :
 Եթէ մեռեալ կեցուցանէր, ոչ երկնչէր նա ի մահուանէ .
 եթէ շունչ դարձուցանէր, ոչ փախչէր նա ի հեթանոսս .
 35 Եհան զմանուկն ի վերնատունն, եւ մնաց մայրն առ ընկերս իւր .
 եւ ոչ յաւուր մահու որդւոյ իւրոյ
 եմուտ տեսանել զյարութիւն նորա :
 Ի Ծործորն փախեաւ ի մահուանէ,
 եւ ի Ծարեփթայ եմուտ ի փախուստ .

ԻԱ. 1 D ք. էր եւ : — 3 D կային : — 4 D փոխանակ : — 5 E բղխուն D բղխումն : —
8 E եղ կանաց : — 11 E Հարազնեաց : — 16 E է՛լ ասաց... զեւղ տացէ (D զեղիայէ) առ
եղիշայ : — 19 D հեթանոսքն : — 21 D ուրախութիւնն : — 27 D հաւատարի : — 34 D Հա-

35 եւ զի գերծաւ նա ի մահուանէ, որսացաւ զմանուկն ընդ նորա .
 որ երկնչէրն ի մահուանէ . մեծարանեաց ի վերայ մահու .
 փախստեայն ի մահուանէ թափեաց զմանուկն ի բերանոյ նորա :
 Իբրեւ քննեցաւ այրին այսպանութեամբ ազգատոհմի իւրոյ,
 ետ նմա զորդին իւր ի դատիկոնէն իբրեւ ի դրանէ քաղաքին .
 40 անդ սով սպանանէր զնոսա, որպէս ասաց մայր մանկանն .
 եւ զի ապրեցոյց զնա ի սովոյ անտի, զերծոյց զնա ի մահուանէ :
 Եկաց յաղաւթս մարգարէն, եւ դարձաւ շունչ պատանեկին .
 ոչ մարգարէն եւ ոչ մայր մանկանն
 տեսին զելանել եւ զմտանել շնչոյն .
 45 եւ զի ետ ցնա զորդին մեռեալ եւ ա՛ռ ի նմանէ կենդանի,
 անկաւ եւ երկիր եպագ մարգարէին, եւ ետ փառս Աստուծոյ :
 Ժողովեցաւ քաղաքն ամենայն ի տեսիլ մեռելոյն որ եկաց .
 ուրացան զկուռս եւ ապաւինեցան յԱստուած,
 որ կեցուցանէ զմեռեալս .
 50 աւրհնեալ որ ուրախ արար զայրին
 ի սովին զոր հալածեաց ի տանէ նորա .
 եւ տարաւ զուարթացոյց զերեսս նորա
 մահուամբն զոր հալածեաց յորդւոյ նորա :

50 D օրհնեալ տէր : — 52 D դարձաւ փոխ տարաւ :

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Ս Կ Ե Ւ Ռ Շ Ե Ր Վ Ը Ն Ք Ը

Յիշատական մը, որ գրուած է 1173
 թուականին, Ներսէս Լամբրոնացիի հրամա-
 նով, կը պատմէ թէ Գագիկ թագաւորի նա-
 խարարներէն Ապղղարիպ կ'երթայ Յոյներու
 Միքայէլ կայսեր եւ անոր կ'առաջարկէ իր
 ծառայութիւնը : Կայսրը անոր կը պարգեւէ
 Կիլիկիոյի իշխանութիւնը, մասնաւորապէս
 կ'«Ընձեռէ նմա զՏարսոն քաղաք հանդերձ
 ընդ ձեռամբ անկեալ զղեկօք» : Հասնելով
 Տարսոն՝ առաջին գործը կ'ընէ իր իշխանու-
 թեան տակ գտնուած Հայերու համար շինել
 եկեղեցիներ եւ վանքեր : Ապա ուշադրու-
 թիւն կը դարձնէ երկու անմատոյց բերդե-
 բու՝ Պապեոնի եւ Լամբրոնի — Տաւրոս լե-
 բան ստորոտը եւ ի գլուխ Տարսոնի — որոնք
 անմատոյց բարձունքներով կ'իշխէին շրջա-
 կայ գաւառներու :

Ապղղարիպ Պապեոն իրեն կը վերա-
 պահէ, իսկ անառիկ Լամբրոն բերդը, ուր
 գետեղած էր Պետրոս Առաքեալին մատը,
 «Հանդերձ այլ եւս պատուական նշխարօք եւ
 մասամբք ի սրբոյ խաչէն եւ զայլ եւս գանձս
 իւր», կը պարգեւէ «միում ի հաւատարիմ
 իշխանաց իւրոց, որ կոչէր Աւշին» (Յովսէ-
 փեան Գար. Կաթ., Յիշատակարանք Ձեռա-
 գրաց, Անթիլիաս 1951, Ա., էջ 541—542 եւ
 551—552) :
 Օշին իր ազգատոհմով կը մտնէ Լամ-
 բրոն, զոր կը գտնէ անհպելի եւ անառիկ՝
 «Վասն յոյժ դժուարաբնակ սահմանացն եւ
 առաւել ամրութեան բերդին» : Բայց զղեակը
 երկար ժամանակէ ի վեր ամայացած էր,
 ուստի կը ձեռնարկէ գայն նորոգել : «Եւ
 պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հան-

